

ՊԱՏԵՐԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "

ՍՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Երկու թիւ մեկ ծաւրով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "

ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տ.դր
20 ւանդիւն



ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւ

լսմ տրուիր

Ա. Զ. Դ.

Պուլկարիոյ եւ Ռուսիայի միջև լարուող քաղաքական միջոցառումները մեր յարգումներով խորհրդանշանաբար կը խորհրդանշեն թանկարժեք իրերէն բաժնեկցիները զրկելու և յայտարարելու կը զեկուցանենք թէ նպատակ չունինք մօտ ժամանակի մէջ ճամբորդութիւն ընելու ուրիշ տարիներու նման:

ԹԻԱՊԱՐՏԸ

Այս երկարութեան Բ. հատորին 384 երեսները տպագրուած են. մնացեալը որ 41 երեսի չափ կըլլայ, երեք շաբաթէ կամրոջմանայ:

Ա. հատորը (162 երես) 1 ֆրանք
Բ. հատորը (424 երես) 2 "

ՍՈՍՏԱՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ և Ռուսիայի միջև լարուող քաղաքական միջոցառումները մեր յարգումներով խորհրդանշանաբար կը խորհրդանշեն թանկարժեք իրերէն բաժնեկցիները զրկելու և յայտարարելու կը զեկուցանենք թէ նպատակ չունինք մօտ ժամանակի մէջ ճամբորդութիւն ընելու ուրիշ տարիներու նման:

1. Տ. Ներսէս եպ. Ասլանեան
2. Վահան Մ. Վ. Յակոբեան
3. Մկրտիչ Մ. Վ. Աղաւանդեան

Սոյն երեք ընտրելիներէ առաջինին կարողութիւնը անվիճելի է. ինք 18 տարիներէ ի վեր Եւրոպայի, Կարմիր եւ Զինուորի նման կարեւոր թեմերու մէջ առաջնորդական պաշտօն վարած եւ կատարելով փորձառութիւն ստացած է, ճարտասան քարոզիչ մըն է, լեզուէ գրչէն շատ ճարտար: Ն. Սրբազնութիւնը չը պատկանիր թիւղանքի եպիսկոպոսներու զառակարգին. ուսանող պէս եպիսկոպոսանալու համար խնայեցած չէ. եպիսկոպոսական վկայականը՝ զար Եւրոպայի Գաւառ. Ժողովքին ստացած էր. տասը տարի զըրօցին մէջ պահելէ վերջ հազիւ հաճած է իր քայլերը դէպի Եւրոպայի ուղղել եպիսկ. կարգը ստանալու համար: Գիտէ լաւ անգլիներէն:

Երկրորդ ընտրելին Տ. Վահան Մ. Վ. Յակոբեան, Պուլկարիոյ արքի Պատր. փոխանորդը, թէեւ մեզ անձամբ անծանօթ, բայց Թիւրքիոյ եւ Սօֆիայի մեր թղթակցներու վկայութեանցը յիշով կրնանք ըսել թէ Ժողովքի բանիբուն եւ ճարտարախօս եկեղեցական մըն է:

Երրորդ ընտրելին, Տ. Մկրտիչ Մ. Վ. Աղաւանդեան համար չենք կարող ունէ վկայութիւն ընել, քանի որ իր մասին որոշ տեղեկութիւններ կը

պակսին մեզ առ այժմ: Բայց հաւանական է որ բոլորովին խակ եւ անփորձ մէկը չըլլայ. նկատելով թէ կրօն. Ժողովքը Պուլկարիոյ նման կէս եւրոպականացեալ եւ այլազան նկարագիրներով խառն գաղթավայրի մը համար՝ չըլլանայեաց եւ օտար չըլլանակներու պատկանած ազգելու կարող կղերական մը ընտրած պիտի ըլլայ հարկաւ:

Այժմ կապառուի Պատր. Փոխանորդ հօր հրաւիրագրին հասնելուն, որուն համեմատ իւրաքանչիւր քաղաքացի քաղաքէ մէկ աշխարհական պատգամաւոր պիտի զրկուի Սօֆիայ, ուր պիտի գումարուի ընտրողական ժողովը, 10 աշխարհական եւ 4 եկեղեցականէ բաղկացեալ, ընդ նախագահութեամբ Փոխանորդ Հայրաւորին:

Ըստ մէկ, եթէ այդ Ընտր. Ժողովին պաշտօնը պիտի ըլլայ միմիայն վերաբերել երեք ընտրելի եկեղեցականներէն մին առաջնորդ ընտրել, չարժեք պատգամաւորներու երթելուն կին համար խել մը ծախքեր ընել. միւսինոյն բանը նամակներով ալ կրնայ կատարուիլ: Իսկ եթէ այդ Ժողովը թեմական կազմակերպութիւններ ընելու, առաջնորդարանի պիտեմէն դնելու, կառավարութեան եւ ազգին միջեւ հաստատուելիք պաշտօնական յարաբերութեանց եղանակին վրայ խորհրդակցելու, էական խնդիրներով զբաղելու ձեռնհասութիւնը պիտի ունենայ, պէտք է որ պատգամաւորական պաշտօնին կարեւորութիւնը չեղաւոր օր առաջ, որպէսզի Ժողովուրդը գիտնայ զորոքին կարեւորութեան համեմատ էն կարող անձերը ընտրել ու զրկել լիազօրութեամբ:

ԳՈՐԴԱՅԻՆ

ՄԱԿԵՒՈՆԻԱ
ՔՐԻՍՏՈՐԵԱՏ ԵՒՐՈՊԱՅԻ ԴԻՐԳԸ

Մակեդոնական հուրի եւ արիւնի սոսկալի տեսարանը կը շարունակէ՝ յանկարծ անտարբերութեան մատնուած քրիստոնեայ ժողովուրդներու աչքին առջեւ պատ. զուրկ, Երկու տարիներ առաջ կեդրոնական Եւրոպայի ամբողջութիւնը կը կատաղէր այն մտտ. ծուծով թէ՛ Անգլիա քաջասիրտ փոքր Պօէր Ժողովուրդին հետ անարդարութեամբ կը վարուէր: Միակ գաղափարը իրենց միտքին եւ արիւնին հանգուածելու կարողութեան զեր ի վեր էր. Այսօր հարիւրաւոր անգլէն մարդոց, կի-

ներու եւ մանուկներու յայտնի կուտարածին եւ հազարաւորներու գար. շահոտ բանտերու մէջ միասին կուտակուելու յուրը ժամանակին այս համակիր հանդիսատեսները անշուշտ կը թողու. իրաց առեալ ֆրանսա, տապաղներու ի նպաստ ո'չ յանձնաժողովներ գոյութիւն ունին եւ ո'չ ալ բողոքներ, զայրոյթի միջոցներ եւ հանգանակութիւններ տեղի կունենան: Ուրեմն Սլուը մա. դ. եւ քրիստոնեայ չէ. Մակեդոնացին հարաւային Ափրիկեցիին նման ձեռք, կազմուածք, տարածութիւն, զգացում գործել կիրք չունի: Անտարակոյս ունի, բայց իր դատը Պօէրներու գաղին նման անխոստովանելի եւ շահաւէտ քաղաքական ծրարգիրներ չսօզներ: Հանելուկին թելը այս է. Երկու տարիներ առաջ Պօէրներու անունով կերպիւնային: Այսօր Եւրոպական քաղաքականութեան թղթախաղին մէջ զօր: Թուրքն է, եւ տասը հազար Մակեդոնացի քրիստոնեաներու տապալանքը չպիտի յաջողի Եւրոպացի փափկասիրտ հանդիսատեսին մէկ «Ֆէնիկ» (գերմ. դրամ) ին կամ «Էլէր» (գերմ. դրամ)ին ալ ժեմանալ:

Սլուանիկի մէջ տեղի ունեցած տինամիթի թշնամաբերը՝ քանի մը յուսահատ գաւազներնու գործը՝ չափազանցօրէն առեւի ռճիր մըն էր, զոր կարելի չէ շատ խստիւ դատաւարանել: Բայց ամենախիստ արդարութիւնն իսկ չը կրնար հարիւրաւոր անմեղներու արիւնը պահանջել ի բաւութիւն քանի մը ռճրագործներու թշնամաբերն ուրոք իրենց գրգռ. ծաղէտին պատահեցան: Պուլկար կառավարութիւնը ապահովագրեց ոչ մատ եւ ոչ ալ բաժին ունի այս գործին մէջ. եւ պուլկար մամուլը ճիշդ ժամանակին եւ տուանց վարանելու գայս յայտարարեց: Բայց թուրքին բարեկամները խնդիրը մեծ. ցրնելու առիթը չկորսնցոցին: Զարիքին յառաջ բերած գրգռումի ծածկոյթին տակ եւ կեդրոնական Եւրոպայի քրիստոնեաներու դատ մը տալու համար Ապտիւ Հոմիտի ուղղած խրախուսներուն հետեւանալը սոսկալի արիւն:

նահեղութիւններ կատարուեցան որոնք խորհիլ կուտան թէ վայրենին եւ զարգացում քարոզող իրարմէ բաժնող տարբերութիւնը որքան չնչին է եւ ինչքան դիւրութեամբ քննարկ վայրենի գաղաւը իբր մարդ կարծնայ: Պաշը-պաշուներու վայրագութիւնները արգարացնող սուտ պատմութիւններ — հիպոթոսական տեղեկագիրներ, բոլ հերքուած — հրապարակ նետուեցան Գրան կողմանէ: Կեդրոն. Եւրոպայի մամուլ օրգանները մեղմացուցիչ դարձուածքներ յօրինեցին զայն պարտկեղու համար եւ իրողութիւնը ժամանակագրուեցաւ հետեւեալ կերպով «վերջապէս Օսմանեան կառավարութիւնը սկսած է խստիւ զսպել անկանոնութիւնները եւ կարգ ու կանոն կը վերահաստատէ տրագաբար»: Այնքան խորին համակրանք Պօէրներու վերաբերող բարեկիրթ քրիստոնեաներու դէպի Պաշըպօղուներու ձեռքով վերահաստատուած կարգն ու կանոնը չաւարտած ներքողը տեսարան մը կը պարզէ որ ճշմարտութեւ հրեշտակային ըլլալէ շատ տարբեր է: Ռուսիա իսկ, որուն շահերը այժմ Մանչուրիոյ մէջ կը կեդրոնանան, արտասովոր կերպիւ խուլ եւ կոյր կը մնայ թէեւ երբեք լուռ: Երբ հոգեբաւական վարկեանը հասաւ իր գիւլանագիտական ներկայացուցչները յանկարծ իսլամի կողմը անցան եւ Ս. Բեդրսպուրկի Եւրոպայի Սոցիալական լրագրին հեղձօրէն բաժնի համեմատ, «հիպատոսական տեղեկագիրներու մէջ «դէպի թուրք իշխանութիւնը «վստահութեան վեղում մը կարւտայտուի եւ միաժամանակ «տարբերակ կասկած եւ թշնամութիւն դէպի տարաբաղդ բրիտ. տոնեաները»:

Հին-Սերպիոյ բնակչութիւնը կողպտող եւ սուրբ ու կրակի մօտ. նող նախալուծակ Ալպանացիները ներդրումիտ անիշաչարութեան արժանացան. ուսական հիպատոս Եւրպիանի սպանլին ռճիրը վեհանախարար ներուեցաւ եւ տեղեկագրուեցաւ թէ թրքական իշխանութիւնը «հաւատարմօրէն կը

«գործադրէ ձեռնութիւններու կողմէն առաջարկուած բարեփոխութիւնները»:

Եթէ թուրքը եղած ըլլար Ման. չորիացի, Չեօնչիզ, Չինացի Պօքսէր կամ վերաբերէր ուրիշ ո եւ է տոհմի կամ ցեղի՝ որուն միմիայն արմուկով կոշտաբար Ռուսի մը դպած ըլլալու պարագան պատըրուակ ընծայած ըլլար ցանկալի նահանգի մը շուրջ զինուոր հաւաքելու, որքան տարբեր պիտի ըլլար պաշտօնական ժամանակագրութիւններու ոճը:

Իրողութեան հետաքրքրական կողմը այն է որ տիեալագիտութիւնը բուն հեղինակները ցարգ չեն գտնուած: Թէ պատասխանատու պիտի լիար քաղաքագետներ չէ կարելի կազմակերպել նկատել ամէնուն յայտնի է. Եւրոպացիներ տիրաւորութիւն ունէին ամենեւեմ օգը հանելու ամենէն կարճ ճամբան էր դատարան լաւագոյնը կորսնցնելու և կարելի չէ որ ինքզինքնին կործանել իրենց փափաքը եղած ըլլար: Անմիջական հետեանքը — զոր ամենէն կարճատեւ մէկը կրնար նախատեսել — մաս մը անմեղներու եւ թերեւս քիչ ու շատ յանցաւոր քրիստոնեաներու կոտորածը և Դրան Պուլկարիոյ հետ պատերազմելու գահալէժ փորձն էր: Հետեւաբար Մակեդոնիոյ թշնամիներուն քաղաքականութիւնը նոր զարկ մը ստացաւ այս ոճի ինչ հետեւանքով. անոնք եւ թուրքի աշահեցան անկէ: Դրան և ֆրանսական մամուլը պատահարին հանդէպ գործուած զեղծումին ընդդէմ զայրոյթով բողոքեցին եւ ջարհն արտաքին գոգծերու նախարարը ճիշդ ժամանակին Սուլթանին սանձը քաշեց: «Խորամանկ մե. «քենայութիւն մը կըսէ Սվէթ որ

«ծրագրուած է Պերլին մէջ և վիէն. «նայի միջոցաւ կը գործադրուի, «թուրքիան պարզապէս կը գեր. «գոթ Պուլկարիոյ դէմ: Բայց հե. «եռն չէ վայրկեանը երբ Սուլթաններու ամբողջութիւնը պիտի «կանգնի մէկ մարդու պէս եւ «կուռի արգելելու համար Տեւոնն. «եան անկուշտ որովայնը որ դայիս «լափել կուզէ»:

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Մեր ՄԱՍՆԱՌՈՐ ԹՂԹԱԿԵՆ)

Սոփիա 29 Մայիս

Այսօր կէսօրէ վերջ ստացուած հետաքրքիր մայրաքաղաքի մէջ ծանուցին Սերպիոյ Ալեքսանտր Օպրէնովիչ թագաւորին եւ Տրակա թագուհիին ողբերգական մահը:

Նրէկ գիշեր անձանթ անձեր պատուանէն պալատ մտնելով հրագէտով կապաններ թագաւորը, թագուհին, նախարարական Մարքովիչը եւ թագաւորին թիկնապահը: Թագաւորին եւ թագուհիին դիակը գտնուած է քովքով, իսկ անոնց մօտ թիկնապահները:

Այս լուրը Պելկրատի մէջ մեծ յուզում յառաջ բերած է:

Հին, Մարգովիչի նախարարութիւնը վար ստնուած է, Նոր նախարարութիւնը կազմուած է՝ Ալեքսանտր Մարքովիչի իբր նախարարական եւ Գալէ-Վիչ Արտաքին գործոց նախարար: 1901 տարու Սահմանադրութիւնը գործողութեան վերահաստատուած է իր օրէնքներով: Մայիս 19 ին կատարուած օրէնսդրական ընտրութիւնք բեկեալ համարուած են, եւ հին արմատական Սքուփչինան յունիս 2ին ի ժողով

(*) Սվէթ 7 Մայիս 1903

հրաւիրուած է: Վաղաքական շրջանակներու մէջ ասիկա կը համարեն ազգերու պատմութեան մէջ եղական դէպք մը որուն նմանը չէ տեսնուած նոյն իսկ ամենէն բռնապետական եւ ոչ քաղաքակիրթ վեհապետներու հանդէպ: Ամեն ոք կը տեսնէ թէ այս յանդուգն սպանութեամբ մեծ եւ ընդարձակ զաւազրութիւն մը կազմուած կայ եղեր Օպրէնովիչ գերդաստանին դէմ որուն վերջին միակ շահաւորն էր Աղեքսանտր թագաւորը եւ որուն կեանքը վերջ կը գտնէ այսպիսի ամենաողբերգական կերպով մը:

Պերլինէն հեռագիր մը կըսէ՝ «Ֆեօլ-նիշէ Յայթուէն» կը ծանուցանէ թէ մայիս 29ի գիշերը (երէկ իրիկուն), բանակը թագաւոր հռչակած է զԲէթր ԳարակէօրկէՎիչ: Զինուորական անձինք պատուհանէն մտնելով կ'սպանեն թագաւորը եւ թագուհին: Կըսուի թէ նոյն իսկ ըստ նախարարք սպանուած են: «Փրանքֆորթը Յայթուէն» կըսէ թէ ուրիշ սպանութիւններ ալ կան: Մանրամասնութիւնք կը պակսին:

Վերջին լուր մը կը հաղորդէ թէ, յեղափոխութիւնը կազմուած է զինուորական կուսակցութիւնէն, որուն գլխաւորները երէկ գիշեր պալատ մը մտնելով կը գնդակեն թագաւորը, թագուհին եւ նախարարական որ նոյն ժամուն կը խորհրդակցի եղեր թագաւորին հետ, Տրակա թագուհիին եղբայր ենթասպայ ԼուկէՎիչը Սերպիոյ գահաժառանգ ընտրելու համար:

Ազատական Ալեքսանտրովիչ պիտի հրաւիրէ Սքուփչինան յունիս 2ին ընտրելու նոր թագաւորը:

Սակայն այստեղի (Պելկրատի) զօրաբաժինը այս առաւօտ թագաւոր հռչակեց Բէթր ԳարակէօրկէՎիչը որ ամենայն հաւանականութեամբ թէ Սքուփչինայէն պիտի ընտրուի եւ թէ տէրութիւններէն պիտի ճանչցուի:

Դեռ մինչեւ այս վայրկեանս պուլկար կառավարութիւնը իր Պելկրատի ներկայացուցչին ո եւ է տեղեկութիւն չէ ստացած այս գաւազրութեան մասին: Այսօր կէսօրէ վերջ ժամս 3ին նախարարական Տ. Բաչո Բէթրով իշխանին քով ունկնդրութեան կան:

Նուեցաւ: Շատ հաւանական է թէ քերական սահմանադիր զինուորական ուժը զօրացուի:

Վերջին ԼՈՒՐԻ Բացի նախարարական Մարգովիչէն պալատին մէջ սպանուած են նաեւ պատերազմական նախարար Փավլովիչը, ներքին գործոց նախարարը, թագուհիին եղբայրը, ներքին թագաւորին բոլոր հետեւորդները ընդ որս եւ պիտաւոր թիկնապահ Բէթրովիչը:

Յեղափոխութիւնը եւ սպանութեանքը տեղի ունեցած են ժամը 10 կէսէն 5, կէս գիշերէն վերջ:

Նոր գահաւոր կ'ազմող անձինք կը կոչուին «ժողովրդին բարեկամ» նախարարութիւնը: Բացի ակաւաւորազատական Ալեքսանտրովիչէն նոր գահաւոր մէջ կը մտնէ նշանաւոր ազատական Ալեքսանտր Բրոթիչ իբր նախարար ներքին գործոց, Մաշին (?) հանրային շինութեանց եւ մի քանի բոսֆէսորներ:

Չը գիտցուի արդեօք ընդհանուր բանակը պիտի մասնակցի՞ յեղափոխութեան որը կացութիւնը անորոշ կը թողու:

Կըսուի թէ Մայիս 29ը Օպրէնովիչէն տան մասնաւորապէս դժբաղդ օր մը եղած է: 1869 Մայիս 29ին կը զարնուի իշխան Միխայիլը եւ այսօր մայիս 29ին Սերպերը կ'սպանեն Օպրէնովիչէն տան վերջալուր իր սիրելի Տրակային հետ:

Ստուգապէս կը հաստատուի թէ Վառնայի աշտման նս հանգապետ Մ. Ծօրով պաշտօնանկ պիտի ըլլայ եղեր:

Պատրիարքական Փոխանորդ հայր Գեր. Վահան Օ. վրդ. Յակոբեան երէկ չէ աղջի օր այցեկեց Սօֆիայի Մետրօպօլիտ Գեր. Պարթօլէյի որուն հետ կէս ժամէ աւելի սիրալիր տեսակցութիւն մը ունեցաւ: Վառնայի Մետրօպօլիտ Գեր. Սիմօն եւս որ այցեկաբար աստ կը գտնուի եւ պուլկարական Սինօքին նախապահն է իբր փոխանորդ Ամեն. Էկզարգին, ներկայ էր սոյն տեսակցութեան միջոցին անոր հետ եւս փոխանորդ հայր ծանօթացուելով եղբայրաբար զիրար ողջունեցին:

Նախարարական զօրավար Բաչո

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(83)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՌԵՐԱՆԳՈՒԱԾ ԱԶԶԻԱԸ
(ԿՈՏՈՐԱՍԷ ԱՌԱՋ)

Սէլվի անոր ետեւէն նայեցաւ ու մըմնեց ինքնին:

— Վա՛տ . . . Ե՛րբ պիտի ըլլայ՝ որ քու արեւնդ խմեմ ես, Ե՛րբ պիտի ըլլայ՝ որ քու գարշիլի դիակդ ոտքերուս ներքեւ ինայ որդնոտած չունի մը պէս . . . Ա՛խ, կարծեց թէ՛ խարուհեցայ ես, կարծեց թէ՛ հաւատացի Սագօյիս նկատմամբ ըսածներուն: Ի՞նչ . . . տարիներով բանտերու մէջ տառապելէ ետքը, Սագօս ուրացող ըլլա՛յ, դաւաճան մը դառնա՛յ՝ իր Ազգին ու հաւատքին հանդէպ . . . Ո՛վ . . . Սասունցի՛ Սագօ՛ . . . : Անկարելի՛ է այդ . . . :

Մանկամարդ աղջիկը վերջացուցած չէր իր մեծախօսութիւնը, երբ ներս եկաւ տարիքոտ կին մը: Այս կինը հաղարապետին մայրն էր, որ հակառակ իր պատուըցած կերպարանքին. պահած էր դեղեկութեան երեւոյթը:

Ապարանքին մէջ Մեծ-Հանըմ կը կոչէին զինքը:

Արդ, Սէլվի անպարանքով Մեծ-Հանըմին դէմն ելաւ ու անոր ձեռքը համբուրեց:

— Ապրե՛ս, աղջի՛կս, մըմնեց Մեծ-Հանըմը՝ գորովալի ձայնով մը: Նստի՛ր նայի՛մ ի՞նչպէս ես . . . Ի՞նչու տխուր է կերպարանքդ: Կըսեն թէ երկուստարներուն է աշխարհքը, ի՞նչու համար զուարթ չըլլաս:

Սէլվի իր տրտմալի աղուոր աչքերը յառեց Մեծ-Հանըմին վրայ ու գառնութեամբ մը ըսաւ.

— Ո՛հ, Մեծ-Հանը՛մ, չեմ կրնար ապրել այս ապարանքին մէջ . . . :

— Պատճառը:

— Ի՞նչ քեզ . . . միթէ՛ ձեր խիղճը չը յայտնէր ձեզի: Մտածեցէ՛ք թէ՛ զրկուած եմ հայրենիքէս, զրկուած եմ ծնողքիս գերեզմանէն, զրկուած եմ հայրութենէս ու կրօնքէս ալ . . . :

Մեծ-Հանըմը գողգողաց ու անոր աչքերը լեցուեցան տաք արցունքով մը: Բայց ջանաց ինքզինքը զսպել . . . ջանաց իր կերպարանքը ծածկող դառնութիւնը փարատել. հետեւաբար ճիգ մը ըրաւ ու պատասխանեց.

— Սէլվի՛, սիրելի աղջի՛կս, ատանկ տխուր մտածումներ հանէ՛ մտքէդ: Տե՛ս, ի՞նչ երջանկութիւն չըկայ քեզի համար այս ապարանքին մէջ: Գիտցիր որ զաւակս կը խնթենայ քու վրայ ու ամեն ատեն կուզէ որ ուրախ ըլլաս դուն:

— Ուրախ ըլլա՛մ ես . . . ընգհատեց Սէլվի:

— Հարկա՛ւ:

— Միթէ՛ քայէն ծնած եմ ես: Չէ՞ որ ամեն մարդ խիղճ մը ունի: Երբ ներքին ձայն մը հանդարտ չը թողուր զիս, երբ սիրելիներուս արեւնը

կը քաշէ իմ սիրտս, ի՞նչպէս կրնամ ուրախ ըլլալ: Ըսէ՛, Մեծ-Հանը՛մ, կրնամ ուրախալ թէ իրօկներուս մէջ հայրութեան արեւնը չեմ կրնար . . . կրնամ ուրախալ թէ թշուառ Ազգի մը թշուառ գերուհին չեմ ես: Եւ դուն պիտի հաւատաս որ բռնութեան տակ խիղճը կրնայ լռել . . . :

— Ծշմարեմ է . . . բայց ի՞նչ ընես . . . ամեն մարդ իր ճակատագրին համակերպելու կը պարտաւորուի: Բաղդաւոր չե՛ս, երբ ատանկ ապարանքի մը մէջ տիրուհի մը դարձած ես, փոխանակ գերուհի մը ըլլալու:

— Ո՛հ, բաղդաւոր չեմ . . . : Իցի՛ւ թէ գերիի մը պէս վարուէր զաւակդ ինծի հետ ու ամեն օր չաւառար զրկանքներու ենթարկէր զիս . . . : Ես այդ զրկանքներով լի կեանքը նախամեծար պիտի համարէի, որովհետեւ պատուաւոր պիտի ապրէի . . . :

— Միթէ՞ պատուաւոր չես ապրիր:

— Ո՛հ:

— Ի՞նչպէս ո՛չ . . . չեմ հասկնար:

— Մտի՛կ ըրէ՛, Մեծ-Հանը՛մ, միշտ կրկնած եմ թէ՛ ազատ կամքով չեմ մտած այս հարեմին մէջ. հետեւաբար պատիւս բռնաբարուած է . . . :

Մեծ-Հանըմը գողգողով ոտքի կեցաւ ու Սէլվիին ձեռքը բռնեց իր ձեռքերուն մէջ, յետոյ մըմնեց.

— Սէլվի՛, Սէլվի՛ . . . գիտեմ թէ՛ քու ազատ կամքով չես մտած այս հարեմին մէջ . . . : գիտեմ թէ՛ որդիս բռնութեան տակ գնելով քու կուսութիւնդ արատաւորած է . . . : վերջապէս՝ գիտեմ թէ՛ չես ուրացած քու ազգութիւնդ ու կրօնքդ . . . : Այս բոլորը շատոնց է որ իմացիր էի: Միեւնոյն ատեն քու վարմունքդ ալ տեսած եմ եւ կը զգամ թէ

նկատելով որ փոխտնօրդ հայրը իր
միջոցներով արդեն համար չափ մը
քաղաքներ այցելելու հարկին մէջ կը
գտնուի, պուկարական երկաթուղի-
ներու համար Ազատ Տնտեսական մը տալ
բարեհաճեցաւ, Ա. կարգի:
Հայր Սուրբը այս իրիկուն կը մեկնի
ի Ռուսոնոգ:

ԱՐՄԵՆԱԿ

ԵՂԲԱՅՐԱՍՏԱՆ ԽՄԲԱԿ

Ողբացեալ Միսո-Շահէնի սպանու-
թեան քստմեկի ոճերն մէջ իրենց
մեղադրութիւնը պարտկեցու համար
գեռ յիմար փորձեր կրնեն Սագունի-
Արզումանեանց առաւ-հիգան կենտրոն
եւ Ռուսոնոգի 3-4 խնէններէ բաղ-
կացած Հնչ. Մասնաճիւղը (?)

Ոճերն հիշելովները, թեղարիչ-
ները ու մեղադրեցները ցոյց տալու
բաւական մեր ստացած վաւերացումը-
թերէն, վկայագրերէն եւ պաշտօնա-
կան խոստովանագրէն զոր մեր կողմէ
փաստ մը աւելցնելու պէտք չտեսնա-
րիսկ մեր խմբագրի պաշտօնին բեր-
մամբ մեզ հաղորդուած այդ փաստա-
թուղթերը զամբիւղը նետելով յուռ-
թիւն պահելու վստահութիւնն ալ եր-
բէք յանձն չէինք կրնար առնել:
Հետեւեալ մեր անկողնակալի ու-
ղիէն առանց չեղած ըլլալու, հրա-
պարակագրի մեր պարտքը կատարե-
ցինք յաջորդաբար մեզ հաղորդուած-
ները ժողովրդին պարզելով, հրատարա-
կեցինք նաեւ Սագունի-Արզուման-
եանց «կենտրոն» ինքզնուկ հերքմա-
գիրն ալ, որուն կցուած Փոթիի տե-
ղեկագիրն՝ զոր հրատարակել չեն ար-
տօնած միւր, կատարելապէս համո-
զուած գոյացուց մեր մէջ թէ Շահէնը
Սագունի-Արզումանեանց հաստատման
պաշտօնական անվեղ զոհն եղած է:

Բայց եղբայրսպան խմբակը կատ-
ղեր է մեզ դէմ ոճերը իր բոլոր մեր-
կութեամբը ժողովուրդին պարզելու
համար: Եւ Սագունիին ինք թէեւ այ-
սօր կողմէս, բայց Սմբակեան իրենց
նոր օրկանին Յրդ թիւին մէջ սա

ծիծաղելի յիմարութիւնները կը փըս-
խէ:

1) Իբր թէ Տ. Չիթեան Վառնայի
մէջ յայտարարած ըլլալ որ «Ինքը չա-
րունակ պատակտուններ յառաջ պիտի
բերէ, որպէս զի կաղմակերպութիւն-
ները ուժեղանան»:

Ընթերցողք կը տեսնէ՞ք սա իշա-
կան սուտը: Չիթեանի ատենախոսու-
թիւնները ունենցողը 5-600 հայերէն
միլ լսեր է այդպէս խօսք մը:

2) Շահէնը մասնու թեան գործիք եւ
նոր հատուածի «այսօրուայ դիվար-
ները ապացուցուած մասնիչներ են
եղել, դա անհրաժեշտ է» կրնէ Սա-
գունիին լրբաբեր առանց փաստի:

3) Այդ եղբայրսպան խմբակի պիտ
Սագունիին Պոլսոյ Հայոց սա տողերը
կը ձօնէ. «Ես՛ այսօր Պոլսական այլա-
սեուած միջնորդութիւն արտադրութիւնը
եղող, այդ էսպէս հայախօս թուրք
տարրը, անտեղեկալ այն սրտառուչ եւ
հոգեբանական զգացումներին, որով
կողմաստանը համաձայնում ու ցնցուած
է իրա համար դիվիւ Հայաստանցի
բառը լսելիս»:

Տեսէք, Հայաստանի անունը ինչ-
պէս կը ջանան շահագործել, մինչ-
դեռ ներքինապէս սոցիալիզմի համար
Հայութիւնն ալ, Հայաստանն ալ զո-
հն վճարած է տղիտարար կրօնատոտեմ:

4) Սագունիին մեզ թրքաճիւն կան-
ուանէ, փոխանակ ինքզինքը ու
զինք հիւրասիրող նորածին թերթին
խմբագիրը Սպարճ-Գիւլեանը, քաղա-
րածին անուանելու, որոնց դիմագիրն
ալ այդ կը վկայէ: Իսկ մեր տոհմի
մասին նա կրնայ եղբորոյ վաճառքուն
եւ եկեղեցիներուն մէջ կարգաւ հա-
րիւրաւոր տարիներէ ի վեր քան-
դակուած շատ մը յիշատակարաններ:

Ռուսոնոգի խնէններուն պաշտօնա-
կան?? ցնդաբանութեանց հոս միտմի
պատասխանելու տեղի չկայ, քանի որ
իրենց շատերէն սիրուած ու յարգուած
հին Հնչակեան գործիչի մը կատարած
քննութեան արդիւնքը եղող նամակին
սա հետեւեալ տողերը միայն կը
բաւեն ոճերն «կանխապատրաստուած»
ու «հրահանգեալ» ըլլալը անգամ մըն
ալ պարզել:

«Փոթիի մէջ Միսոն «Շահէն» կը

«հրահանգեալ» զործե-
«րու մասին խորհրդակցելու համար»
«ժողովին» բաւական թուով ընկեր-
ւներ ներկայ գտնուած են, որոնց
«մեծ մասը թիչ յետոյ մեկնած է»
«իսկ մնացեալները Միսոն յանկար-
«ածակի բերելով, անոր թեւերը
«բռնել ու կաշկանդել յետոյ, գըլ-
«խին ու կուրծքին 14 հալուածներ
«կուտան եւ չարաչար կը սպաննեն»:
«Միսոն կաղաղակէ եւ քովի դինե-
«տունէն վրացիները կը հասնին եւ
«տարգասպանները կը ժախջին» ոս-
«տիկանութիւնը կը յաջողի անոնց-
«մէջ 2-3 հոգի ձերբակալել»:

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍՐ ժայիս 18ին
Երեւանի գաղաճ է, ուրկէ Սեւան մեկ-
նելով քանի մը օր հոն մնալէն վերջ
կրկին էջմիածին պիտի վերադառնայ:

— Պէ՛նկին ինչ մէջ կազմուելիք Հայ-
կական Յուդանացիներ քանի մը ամիս
յետաճողներ է, նիւթական ապահո-
վութիւն տակաւին չըլլալուն պատ-
ճառաւ:

— ԿԱԹՈՂԻԿՈՍՐԱՆԻ պաշտօնա-
թերթ Արարատէ կը տեղեկանանք թէ
Սինոդը որոշած է չընթերցական հրա-
հանգներով պատուիրել Ռուսաստանի
Հայոց առաջնորդարաններուն որ նա-
խապէս իրենց դիւաններէն կարեւոր
տեղեկութիւններ եւ փաստաթղթեր
ժողովելով, դատ բանան կողմասի
կրթական վարչութեան դէմ, ետ
պահանջելու եկեղեցիներու եւ վան-
քերու կալուածները եւ իրեղէնները
զորս գրաւած է յիշեալ վարչութիւնը,
եւ սինոդին ուղարկել այդ կալուած-
ներու ու իրեղէններու ցուցակները,
տեղեկութիւններ տալով հանդիման
որոնց համար դատի դիմուած է եւ ո-
րոնք են կրկին Հայոց վերադարձնել
վճարածները, եւ թէ այդ վճարները
գործադրուած են:

— ՏՓՂԻՍԻ Թերթիւրը գրածին
նայելով, Գառնակերեան եպիսկոպոս

իրեն դիմող տիրացուները անվրէպ
քահանայ ձեռնադրելու փութկետու-
թիւն մը ցոյց կուտայ եւ կը յայտա-
րարէ եղեր թէ իւրաքանչէր 20 տան
մի աէրաբէր ձեռնադրել վճարած է, որ
«էգ սանձարձակ ժողովրդին սանձն»,
հոգին հանեն»:

— ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ մատակարարու-
թեան մէջ գործուած զեղծումներուն
պատճառաւ մէկ քանի պաշտօնեաներ
հրաժարեցուցուած են:

— ԱՐԵՎԻԿԱՅԻ Հայաշատ քաղաքնե-
րու մէջ Սղաթողներ տեղի կուտնե-
նան ի յարգանս ողբացեալ Շահէն
Միսոյ յիշատակին:

— ՊԱԳՈՒԷ կը գրեն որ հոն լուր
տարածուած է թէ Տ. Գարեգին Չիթ-
եանը Եւթիայի մէջ հին Հնչակեան-
ներէ սպաննուած է. կը մայթենք որ
գոնէ այս տխուր լուրը սուտ եղած
ըլլար:

«ԹՐԱԿՈՒՆԻ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԳԱՀԻՐԷ, Կ. Ե. — Թիւրքալարի Բ.
հասորը երեք շաբաթէ յետոյ ամբող-
ջովին տպագրուած ու կազմուած կըլ-
լայ եւ անմիջապէս կը զրկենք Ձեզ:
Ա. Բրուսեան լուրթիւնը կը շարու-
նակէ:

— ՊՈՒԳՐԷՇ, Դ. Փաշաեան. — Նոր
հասցէնորդ ուղարկելէն յետոյ գրեցէք:
— ՃՈՒՄԱՆ, Թ. Յակոբ. — Ալեքօն
չը վճարեց:

— ՍՕՅԻԱ, Զ. Խ. Ձեր յետեւալ
բաժնեգիրը հրապարակաւ յիշեցնել-
նուս պատճառաւ այսօր թերթը կը
մերժէք. եթէ երկու տարի առաջ մեր-
ժէիք աւելի լաւ կըլլար որ 24 ֆր.
պարտական չէիք մնար մեզ: Փութա-
ցուցէք այդ գրաւը:

ՇՆՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ կիրակի Յունիս 1, կէս
օրէն առաջ ժամը 11ին, Նորակազմ
Աղքատախնամ ընկերութեան Ընդհ.
ժողովը տեղի պիտի ունենայ Սանթ-
րաշի սրահին մէջ:

Կը խնդրուի բոլոր աղքատաւոր ազ-
գայիններէ, որպէսզի հաճին գալ եւ
ներկայ գտնուիլ:

Առժամեայ Ծանփախուժը

զաւակէս կը պօգան, ինչպէս կը պօգայ մարդ մը
զազանէ մը: Ուրեմն հարկ չըկայ որ դուն լապտա-
րես խնդիր: Բայց երբ ըսի թէ՝ «ճակատագրեւ
է, պէ՛տք է համակերպել», ատոր պատճառը ներկայ
գրութիւնդ էր. . . : Ի՞նչ կուգայ ձեռքդ, երբ
օրն ի բուն արցունքներով անցունես, ի՞նչ կը շա-
հիս. . . միթէ՞ կարող ես հետաքննել ասկից:

Սէլվի ապուշ նայուածքով մը Մեծ-Հանրմըն նա-
խեցաւ ու գրեթէ չը հասկցաւ անոր ըսածները: Օ՛հ,
ի՞նչ կըսէր ան. . . որո՞ւ դէմ կը բողոքէր: Ո՛չ ա-
պաքէն իր զաւակն էր ա՛յն մարդը, որ բռնու-
թեան տակ իր հարեմը նետած էր զինքը. . . : Հի-
մակ ի՞նչ դիտարկութեամբ աչքքան անարդարեւ
մը կը վերաբերուէր դէպի իր որդին: Երբէք օր մը
եղած չէր, ուր ատանկ ատուութիւն լսէր անոր
բերնէն. . . ի՞նչ անցած էր անոր հոգեւոյն մէջ:

— Մտիկ ըրէ՛, Սէլվի՛, եւ մի՛ գարմանար. որ
այսքան վատ կը խօսիմ որդւոյս նկատմամբ, չա-
րունակեց Մեծ-Հանրմըն: Մինչեւ հիմտի չէի վստա-
հեր քեզի. . . ինչպէս որ չեմ վստահած հարեմի
միւս աղջիկներուն՝ բովանդակ կենսութիւն մէջ. բայց
սակեց տակ իր մտերմութիւն պիտի ըլլաւ ու եւ լեց-
ուած սիրտս պիտի պարպեմ քու առջիկ: Ա՛խ, տա-
րեւերս համարուած են. . . ու համոզուած եմ թէ
գերեզմանիս մօտը կը գտնուիմ: Լսէ՛ պատմութիւնս
ու յիշէ՛ զիս քու առաքանաց օրերուդ մէջ:

Մեծ-Հանրմըն պահ մը դողդողուն ձեռքը խորշում
ճակտին տարաւ, որուն վրայ սեւ քողի մը տակէն
դէպի վար ցանցնուած ձերմակ մաղկը կը թափէին
քնքուշ յորդումով մը. յետոյ աչքերու արցունքը
սրբեց ու ըսաւ.

— Այն ատեն տաներկու տարեկան էի, երբ ա-
նողոր ձեռք մը Հայրենիքէն ու սրբելիներէս զրկեց
զիս: Ազատ մեծցած էի լեռներու մէջ ու իմս էր
բոլոր աշխարհը. . . լայց միջոցաւ աչքիս ամին
բան ու հարեմը դարձաւ իմ աշխարհը. . . : Ա՛խ,
Ձեքքէններու երկէն Կ. Պոլիս փոխադրուած էի:
Օրերով, շաբաթներով, ամիսներով ու տարիներ-
ով արցունք թափեցի. . . ո՛չ, ձայնս լսող մը
չկուաւ: Երկու տարի ետքը բռնի կերպով անուանա-
ցուցին զիս: Ձեքքէն մը վրէժնալիւր է. . . հայ-
ու նշանաւոր իմացեր էին Կ. Պոլիս գտնուելիս, այդ
պատճառաւ եկած էին որ ատենն զիս ատեւանդող
փաշային տունէն: Աւա՛ղ, անոնց Կ. Պոլիս համրին
ու անյայտ ըլլալը մէկ եղաւ. . . : Ահա՛ անկից
լսիւր մնացի ճակատագրեւ հետ: Այս զաւակը միայն
ունեցայ, որ հօրը պէս գերեզմաններու արեւը մանե-
լով կապիլ. . . »

Մեծ-Հանրմըն պատմելու ժամանակ կը դողար ու
արցունքները կը հոսէին այտերէն վար:

— Ա՛խ, Ձեքքէնդէն մըն եմ, Սէլվի՛, յարեց
Մեծ-Հանրմըն: Կենսութիւն պատմութիւնը շատ աղե-
տալի է. . . : Այս հարեմին մէջ ինչե՛ր չեմ տեսած. . .
ինչե՛ր չեն անցած իմ գլխէս:

— Ձե՛ք որ խոստացար պատմել, ընդհանց Սէլվի:
— Այո՛, խոստացայ, սրբելի աղջի՛կս, նկատել
տուաւ Մեծ-Հանրմըն. բայց կը թողու՞մ ուրիշ ատեն-
ուան մը: Սիրտս շատ լեցուած է: Վաղը կը նստիմ
եւ երկարօրէն կը պատմիմ:

Ու Մեծ-Հանրմըն սրբեց արցունքները. . . նայեցաւ
Սէլվիին գործվալից մօր մը պէս եւ մեկնեցաւ:

ՄԵԾ ՀԱՆՐՄԵՆ ՊԱՏՄԱՐՈՒԹԻՒՆԸ

Երկու օր անցած էր:
Սէլվի անողուտ տեղ սպասած էր որ Մեծ-Հանրմըն
սենեակը դար ու պատմէր իր կենսութիւն աղետալի
պատմութիւնը:

— Ա՛հ, չէ՛. . . չը խաբեց զիս. . . չեմու պատ-
մութիւն մը ընել չուզեց ան, բացառաւ ինչ թուաւ
Սէլվին ինքնիւրէն: Անպատճառ հիւանդ է. . . վեր-
ջապէս բան մը պատահած է որ չեկաւ:

Սէլվի այս տխուր մտածումներու մէջ թաղուած
էր, ահա՛ իր սենեկին դուռը կամացուկ մը բացուե-
ցաւ ու ներս մտաւ Մեծ-Հանրմըն: Մանկամարդ գե-
րուհին իսկոյն անոր առջին վազեց ու անկեղծ դո-
րովանքով մը համբուրեց ձեռքերը:

— Ուշացայ, չէ՛ մի՛. . . միմիջեց Մեծ-Հանրմըն
խաշաղցող ձայնով մը: Բայց տոբալուած էի: Դուն
չես գիտեր թէ զաւակս ինչքան կը բարեկամայ, երբ
ձեր քովը գամ:

— Պատճա՛ռը. . . ընդհանց Սէլվի:

— Երբ պատմութիւնս ըսեմ, ան ատեն կը հա-
կուս թէ ի՞նչու համար զաւակս կուզէ որ առանձին
ապրիմ ու կենսութիւն տխուր կամայականութեանց եւ-
թակայ եղող մանկամարդ աղջիկներու քով չերթամ:

Սէլվի լսեց: Մեծ-Հանրմըն վայրկեան մը մտածեց. .
կարծես թէ ինչե՛ր ուղեց իր անցեալը. յետոյ հառա-
ջանք մը հանելով բերնէն, ըսաւ.

(Շարունակելի)

Ի խ թ ա Ր

Քեոյեքոսէ իգամէր խոռոպոսէ՝ քաւնար միւսնապէրի իյէ շոռ կիւն լէրտէ Տօպրիլէ կիտէն ապօնէլէ. րիմիկ կազէրա պօրձարընը Մ. չիլապիւնա (ֆօթօկրաֆ) էօւնէսէ. լէր պիգի մէկնուն իտէձէքլէր :

Սիլիստրէի կիտէնիլէր տախի Մ. Սրքաքի Սարգիսէանա քէէ. տիլէ իտէպիլիլիլէր :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

ՊՈՒԼԻՍՏԻԱ սինօրը իւզէ րինտէ թիւրք վէ պուկար ազ քէրլէրի պէյնինտէ գազկա վուզաւ պուլընտըզընը Պապը Ալի թէք. զիպ իտէյօր :

— ՍէրէՁ գազապընտա 12 պուկար քէօյլէրին էհալիսի րոււ մէթրօօրիտինէ միւրաճաւթլէ, պուլնտանսնրա էքզարքըն իտա. րէսինտէ չըգուպ րոււ Բաթրի. գինին հիմայէսինէ կիրմէք արզու. սընր պէյան իթմիլլէր իմիլ :

Րոււլար պուլանըգ սուտա պա. լըգ ալլամագ իսթէյօրլար. պու. րոււ րահիպլէրին էսկի առէթլէրի տիր. էրմէնի միլլէթինի տախի օ. րէնճիտէտէն կէշիւրմիլլէր տիր. աէ. մէրէսի տախի պու. կիւնէ գաւար մէյտանտա տըր, իլթէ «Հայ-Հո. ռում» թապիր օլընանլար :

— ՕՍՍ. Հարպիյէ նէգարէթի 8 առէտ Եննէ զըրհլը վարօրլար սըրաբիլ վէրմէք իչիւն էննէպի ֆապրիգալար իլէ մուհապէրէտէ օլտըզը կիպի մէզքիւր վարօրլարա մախսուս Գրիպ թօրլարը վէ խալը տիւմանսըգ պարութ սըրա. րըշ վէրմիլ տիր :

— ՄԸՍԸՐ խտիպի Ապպաս Հիւմի բաշա Սլթանպօլա կէլմէք իչիւն 4 կիւն գարանթինա պէք. լէտիքտէն սօնրա, էվվէլէի կիւն Մանրոշաա վարօրը իլէ Տօլմա Պանձէլէ չըգուպ, սէրալ ֆալ թօնլարը իլէ տօղրու Երլտըզա կիթի :

— ՅԻՐԱՆՍԸՁ հիւթիւմէթի վան վալիսի թահիւր բաշալա վէ Տիւրպէթի վալիսի Նազիմ բա. շալա Լէթիօն տ'Օնէօն նիշանլարը վէրմիլ տիր :

ՏԱԽԻԼԻԹԷ

Ֆիլիպէնին «Մ'ՈՒՎԱՁԷՆԷ» թիւրք կազէթաւընտա կէօրիւլէն աթիտէքի սաթըրլար տըգգաթը. մըզը ճէպ էթտի :

Մանասթըր վիլայէթինտէ 165 նիւ. ֆուլը պիր իսլամ քէօյիւնտէ, հիլ պիր ֆէրտ զուրթուլմագ չարթը իլէ էրքէկ, գաւըն, չօճուք, Մա. քէթինիա իսթիւլըրլարը թարաֆըն. տան գաթլ, վէ քէօյ քեւմիլէն խա.

րապ իտիւթիլինի, վէ համիլէ գա. տընլարըն գարընլարը Եարըլարագ՝ չօճուգլարը չըգարըլտըգտան սօնրա՝ վալիտէլէրինի նաշլարը իւզէրինէ վէգ իտիւթիւնի, վէ հէլէ պիր գաւարն հիլ կէօրիւլմէմիլ պիր թարգտա գա. զըզա օթուրտըրընը օգուլուպ իչի. տէն իսլամլարը պոխուսուս պազը չար. գընլարըն «սէրսէմ թիւրքլէր տահա պու. ճամիլէ նէ վազըթա գաւար կի. տէնէքսինիլ» կիպի թէֆէվվիհաթը Պուլկարիստան իսլամլարընը բէք զի. յառէ թէտհիլ վէ թէհրիճ իթմիլ օլ. մաղլէ, 25 սէնէ էվվէլ պօզդուլըզը քէմալը տէհիլթլէ կէօրիւպ իչիթմիլ օլան Ֆիլիպէ էհալիսինտէն պազըլարը աիլէլէրինի պիրէր պէհանէ իլէ թիւրքիալա աշըրտըզը հէր վազըթտան զիլառէ հէլէճան վէ կիլֆիթիլէօյը մուճիպ օլմուշ տըր: Պուլկարիստանտա էհալի իսլամիլէնին թէսքինի էզհանը վէ թէհիլին հալաթը նամընա մէր. ճիլին նազարը տըգգաթընը ճէլպէ մէհպուրիլէթ կէօրիւք :

Մաքէթոնիւր գօմիթէլէրէ աթիլ օլընտն պալաուրքի զաւ. տարլըգ սէքիլ սէնէ մուգառտէմ էրմէնիստանտա իսլամլարըն իճրա իթտիքլէրի զաւտարլըզըն իւնյա. լաթը օլաճագ տըր. օլ վազըթ. գազըզլանան, տէշիլէն էրմէնի գա. տընլարըն խէլալէսի պու. կիւն թիւրքլէրին կէօզիւնէ կէօրիւնիօր. ֆազաթ գօրգմասընլար, խրիս. թիւնլար վիճտան սահիպի տիրլէր :

ՍԵՐՊԻԱ

ՊԷԼԿՐԱՏՏՈՆ մայիս 29 թա. րիլի թէյէկրաֆ միւտհիլ հալա. տիւլէր կէթիլտի :

Կիճէ սաաթ 2 տէ պիր ալալ սաքէր սէրալը մուհասէրէ իտէր. զապիթլէրտէն իքիսի իչիլի կի. րուպ, գրալըն իսթիֆասընը թա. լէպ իտէրլէր. կէնճ գրալ տէրհալ սիլաշա աալրանուպ զապիթլէր. տէն պիրինի էօլտիւրիւր, տիկէրի իտէ գրալը, գրալիցալը վէ իքի. նալէրլէրի գաթլ իթմէկէ մուվա. ֆագ օլուր :

Պաշգա թարաֆտան տիկէրլէր տախի գրալիցալ Տրալիտըն իքի. պիրառէրլէրինի գաթլ իտէրլէր. վէ պիր թագըթը տախի գօչուպ վիւքէլա րէյիսինի վէ խարիճիէ նազըրընը քէնտի խանէլէրինտէ գաթլ ու թէլէթ իտէրլէր :

Շու մուգաթէլէ էսնասընտա է. հալինին քէմալը սիւքիւնէթլէ սէ. յիւրճի մագաթընտա գալմալը ճա. լիպի տըգգաթ տըր, ֆագաթ սէ. պէթսիլ տէկիլ :

Մուգաթէլէտէ մի. թիթէֆիգ պուլընանլար էհալինին հէր գըս. մընա խօշ կէօրիւնմէք իչիւն տէր հալ Ավուքուճոպիլ նամ զաթըն րէյառէթի իլէ հէր պիր բարթի րուէսաւընտան մուլթէլիլ վէ մուվազգաթ պիր հէյէթիլ վիւքէլա թէլէթիլ իտէրլէր, վէ 1901 սէնէ նին գանունը էսառիսի իւզըն իտա. րէի հիւթիւմէթ իլան էլլէրլէր :

Մէզքիւր գանունը վէ օ պազթըն Սքուպիլնաւր մագթուպ գրալ Ա. լէքսանտը լաղվ իթմիլ վէ ալա. պիր Եննի գանուն վէ Եննի գա.

մարա թէէսիս իթմէկի պիր նէվ չօճուգ օլուճագը Եարմըշ րալ :

Նիհայէթ գրալ Ալէքսանտրին գաթլի իլէ Օպրէնօպիլ սիւլալէսի խիթամ պուլուպ, պուլնտան սօն. րա Գարաքէօկէվիլ սիւլալէսինտէն Բրէնս Բէթլին գրալ իլան օլը նաճաղը թապիլի կէօրիւնիօր. Բրէնս Բէթլի Գարառաղ Բրէն. սինին տալաւալ օլուպ, էլիլէկվ Ջուլիցիլիտա պուլընտըզը մէս. մուլմիլ օլմուշ տըր :

Ա. Ի. Ս. Ր. Ի. Ա.

Վիէննա մէճիսի մէպոսանրնտա պիր մէպուսըն Մաքէթոնիա իլլէրի ի. չիւն Ա. սարիանըն թապիլա իթտիկի րօլիթիգալը թալիլ վէ հիւքիւմէթի մուլթէլէ վէ իսթիլմագ իթմէսինէ վիւքէլա րէյիսի Մ. տը Գէլպէր չէօյ. լէ ճէվապ վէրտի. «Պէրլին ահտնա. մէսինին աշքեմընը թաթպիլ էլլէ. մէքտէ պի. թիւն պէօյիւք տէօվլէթլէր քեւմիլէն մի. թիթէֆիգ օլուպ, Աւս. տրիա վէ Բուսիա տէօվլէթլէրինին Մաքէթոնիա իչիւն թէքիթիլիտա գուվլէթ վէրմէքաթիլլէր, պալգան տա սուլու աալիլին մուհաֆագաթ պիլիլ վէ Բուսիա պէյնինտէ մուգա. րէր օլան իթիլաթըն թէմէլի տիր: Մաքէթոնիա վէ Ալպանիստա ու. սուլը իտալէի իսթիլմէթիլմէք իչիւն թէքիթիլմէթընը նիգալը սուլթէթաթ իճրաւընա Պապը Ալի զայրէթ իթ. մէքտէ տիր :

Էօյլէ Եա, բէք նիգալը իճպա. րաթտա պուլընտըզը իչիւն Գըրգը. իլիսէ սանճաղընտա Պուլկար գալմալը :

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

ԻՆԿԻԼԹԷՐԱՅԱ կիտէն մալ. լէրէ շիմտիլէ գաւար կէօմիլք ալընմալ իլէն, պուլնտան էօթէ կէօմիլք ուսուլինի իհտաա իթ. մէք պապընտա Միւլթէմէլգաթ նազըրը Մ. Չէմպրլէնին գապիլնէ թագաթիլ իթտիկի ճէտվլէ, ին. կիլթէրաա պէօյիւք վէլլէլէ գալ. տըրմըշ տըր: Կազէթալար պու. մէսէլէ իլէ սահիֆէլէր տօլուրի. յօրլար. Լիպէրալլար րօլթէսթ իտէյօրլար. հիւքիւմէթ բարթի. սինին պիր գրալը տախի Մ. Չէմ. պրլէնէ հէմէֆքեաթ տէկիլ տիր. քէզա նազըրլարտան պիր գաշընը կէօմիլք ուսուլինի մուլթիլի պուլընտըզլարընը Լօնտրաաա ա. լրնան տիւնքի թէլէկրաֆ պիլտիլ. միլ տիր :

ՐՈՒՍԻԱՆ Բօլօնիա էլալէ. թիլտէ կաթիլիլ Բօլօնէզ շալիւրա. լէրէ մէզհէպ տէրպլէրի Եննի սէ. նէտէն իթիպարէն Բօլօնէզ լիսա. նը իլէ թէտիս օլընմասընը պիր մէթիւպլէ Չար մէարիֆ նալը. րընա էմր իթմիլ տիր: 1880տէն պէրու մէսէպ տէրսի կաթիլիլ. լէրէ րուսճա վէրիլիլ իտի :

ԻՆԿԻԼԹԷՐԱՆԸՆ պու. սէնէքի վարիտաթը 33 միլիոն լիւրա արթ. մըշ տըր :

— ՐՈՒՍԻԱՆԸՆ Հարպիէ նա. զըրը ժէնէրալ Գուրօթաթըն Ճա. քօնիալա կիլթէք իչիւն Եօլա չըգ. մըշ տըր: Թօղիօտա (Ճաքոն բա. րիթալիլ) րուս նազըրընը գա. պուլ իթմէք իչիւն չէլիլքլէր հա. զըր իտէյօրլար :

ՍՕՆ ԹԷԼԷԿՐԱՓԼԱՐ

Պէլկրաա 30 մայիս

Ալիլ առէն Աւստրիա վարօր. լարը Պէլկրաա էօնիլնէ կէլապ տէմիլ աթտրլար :

— Աօքէրլէր Բէթր Գարալէօր. կիլէվիլ Գ. Ր. Ա. Լ. իլան իթտի. լէր :

— Մաքթուլ կէնճ գրալ Ալէք. սանտըն վէ գրալիցա Տրա. կանըն ճէսէթլէրի տալի պիր թարգ. տա էսքի քիլիսէլէ նագլ օլընուպ, Օպրանէվիլ սիւլալէսինին գապ. րիստանընա տէֆն օլընտըլար :

Հէր թարաֆ սիւքիլէթի հիւք. մ իթմէքտէ օլուպ, Պէլկրաա շէհրի պանտէրալլարէ տօնաուրլըշ տըր :

Յուլիս 2տէ թէճէմիլ օլընտ. ճալ Մէճիսի Ուսուլի (յգուպի. նա) Եննի գրալը իսթիլապ վէ ի. լան իտէճէք տիր :

ԲԱՌԱՐԱՆ

ՊՈՒԼԻՍՏԻԱ — ՀԱՅԵՆ — ՏԱԿԵՆԷՆ 30 ԻՆԵՑ

ԱՍՍԱՏՈՐ ՄԻՐՏԻՊԵՆԱՆ

Կը բաղկանայ 500է աւելի երկսիւ. նակ երիւնիլէ, ընտիր թուլթի վրալ մաքուր տպգրութեմար, պարու. նա. կիլով Պուլկարիլէն լեզուի գործաճա. կան գրիթէ յօրը բառերը Եւ ոճիլը — մօտ 30,000 :

Հրատարակուած են սոալին մի քանի պրակները Եւ միացեալին տպա. գրութիւնը մեծ փութով յառաջ կը տարուի, այս նպատակով կազմուած Մանախուճիս հակողութեան տակ :

Բալանիլիպիլէն Ե 5 ֆր. կանխիկ ճամբու ծախքը միւր վրալ: Տապգրու. թիւնը երբ աւարտի, բաժանորդք այն առնի պիտի ստանան Բառարանը կազմուած: Իսկ եթէ ուզողներ ըլ. լան, հրատարակուած պրակները հե. տըզհետէ Եւ կրնանք զրկել (չօրսը մէկ ծրարով):

Տպագրութիւնը աւարտելէն վերջը գինն պիտի բարձրանայ: Դրաթի փո. խաթէն նամակագրօյմ չընդունուի: Հասոյթին մէկ մասը յատկացուած է տեղույս ազգ. վարժարանին :

Փալաքըզը բաժանորդագրութեալ համար զիմելու են Մանախուճիս գանձապետին հետեւեալ հասցեով՝

Տ. Մասթիս Յակոբեան — Օֆիս Մանսթ. — Հայաշառ քաղաքներէ բաժանորդագրութիլ ուզողներ կրնան զիմել նաեւ իրենց բնակած քաղաքի թաղ. Խորհրդին :

ՄԱՍՆԱՌՈՒՄԻ



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՆ

Եթէ կուզէք հագնիլ Կօշիկներ ո. րոնք իրենց վրալ միացուեն ձեւի Եւ գիւմակուութեան կատարելութիւն Եւ մանաւանդ գինիլ չափաւորութիւն, առանց վարանելու գիւնէք Ս. Ու. րասանճեանի, Մուսալա, Տօթթ. Պասանօվիլի տանը գիւմակ :

Одъединица М. Драгунскъ
Печатница Взаимность Варна